

Նոյն ատեններն է (1705)՝ որ Աւետիք պատրիարք կերթայ ֆրանսական դեսպանատունն՝ հետն առած երեքհարիւր երեւելի է հարուստ հայեր, քանադրանք մը վերցունելու համար: Գարձեալ՝ երկու տարի ետքն՝ 1707ին՝ է որ, եղարքոսական հրամանով, Խաչատուր Մարկոսեան և Տոնապետ Վարդանեան ազդեցիկները ճամբայ կ'ելնեն Կ. Պոլիսէն Եւրոպա՝ դանելով Աւետիք ծածկեալ պատրիարքը բերելու համար, ու կը վրիպին, Ֆէրիոլ դեսպանին նախապատրաստեալ երկդիմութեամբը. թէպէտեւ ժամանակին Օսմանեան Վիչայեան ալ ջերմ փափաքող էր, հայ ժողովուրդին հետ, արեւմտացեալ Աւետիքի դարձին:

Վիպական այս դրուագներէն ետեւ, որ թուրքահայերուն պատմական ամէնէն անանդորր փուլերն են, ու շղթայակիր Գրիգոր Երուսաղէմի խաղաղիկ պատրիարքէն քանի մը տարի առաջ՝ նոյն վանքին խեղճութեանն հօրապէս օգնած են ժամանակին ամիրաներէն թէվէթէլլեան Յարութիւն, Պոլսեցի Մահտեսի Խարայէլ, Մահտեսի Լութֆի և Ակնեցի Երեւանեանց մահտեսի Սեղբեստրոս Պաղիրկեան Պաշը, որ էր ճոխ սեղանաւոր և եղաւ վաճառապետ արքունի: Այս օգնողներուն մէջ ամենէն ազդեցիկն եղած է՝ Կեսարիայի Տարսիսի գիւղէն Արապ օղու Մելտոնը<sup>2</sup>, ճարտարապետ Վահ. Սուլթան Ահմէտ Գ.ի, որ Բ. Դրան ալ մեծարուն էր<sup>3</sup>. նաեւ մահտեսի Սեղբեստրոսի ընկեր՝ Հովուեան մահտեսի Յարութիւն. նոյնպէս Կեսարացի Սարգիս Խալֆան, որ ժամանակին արքունի ճարտարապետն ու Ղալթիայի եկեղեցին վերաշինողը, միւս եկեղեցիներուն ալ պայտազանն էր: Եւ ասոնք ամէնը կը յիշուին ժամանակին գրուածներուն մէջ պերճալատ անունով: Կան դաս մը մահտեսի պայտազաներ ալ, որ յիշուած

1. Յովհ. Համմայ, Բ. տպագրութիւն 1767ի, էջ 139: Երուսաղէմի Աթոռիմ այս քարերարը վախճանած է ի Պոլիս՝ Իսահակ պարթեւի տօնիմ իրիկուներ, 1754 փետր. 5ին:

2. Տ. Ղուկաս Ինճիճեան, Եւրոպիա էջ 131: Նաեւ Բ. ծանօթութեան մէջ:

3. Նոյն, անդ, էջ 169: